Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության օսմանյան խորհրդարանում ունեցած գործունեության վերլուծությունը մենք կարևոր ենք համարում այն տեսանկյունից, թե որքանով էր դա նպաստում արևմտահայության սոցիալ-տնտեսական կացության բարելավմանը: Փաստերը վկայում են, որ այս առումով հաջողությունները շոշափելի չէին: Դաշնակցության ջանքերը ոչ մի արդյունքի չէին հանգեցնում, շարունակվում էր հայ տարրի տկարացման քաղաքականությունը, նույնն էին մնացել քրդերը:

Փորձենք ապացուցել այս ամենը փաստերով: ՀՅԴ խորհրդարանական գործունեության վերաբերյալ հազվագյուտ են Կոմսի (Վ. Փափազյան) հաղորդած տեղեկությունները: Օսմանյան խորհրդարանի առաջին նստաշրջանը բացվում է 1908թ. դեկտեմբերին: Ինչպիսի պատկեր էր այն իրենից ներկայացնում: Հետաքրքիր են Կոմսի հետևյալ տողերը. «Երեսփոխանական հաստեպ ընտրություններու ատեն Իթթիհատի հետ մեր բանակցություններու արդյունքը շատ գոհացուցիչ չէր: Անոնք ներքնապես հրահանգած էին սահմանափակել քրիստոնյա ընտրելիներու թիվը: Վասպուրականը, հայ ազգաբնակչության թիվի համեմատությամբ, կրնար երեք երեսփոխան տալ, մինչդեռ հազիվ մեկը ունեցավ: Նույնը և Տարոնը: Բաղեշը՝ ոչ մեկ»:[1]

Եթե իսկապես, խոսքը գնում էր սահմանադրական Թուրքիայի ստեղծման վերաբերյալ, ապա՝ ձայների թիվը պետք է բաշխվեր հավասարապես: Մինչդեռ խորհրդարանն ուներ հետևյալ պատկերը. ընտրված 266 պատգամավորներից մահմեդական էին 220-ը (125 թուրք, 70 արաբ, 25 ալբանացի), իսկ քրիստոնյա՝ 46 (23 հույն, 10 հայ, 4 բուլղարացի, 4 հրեա, 3 սերբ, 1 ուլահ):[2]

Հայ պատգամավորները հետևյալներն էին՝ Կ.Պոլսից՝ Գր. Զոհրապը և Պ. Հալաճյանը, Իզմիրից՝ Սպարտալը, Հակոբ Պապիկյանը, Քոզանից՝ Մուրատը (Համբարձում Պոյաճյան), Երզրումից՝ Արմեն Գարոն (Կարապետ Փաստրմաճյանը) և Վարդգեսը (Հովհաննես Սերենկյուլյան), Մուշից՝ Գեղամ Տեր-Կարապետյանը, Սեբաստիայից՝ դոկտ. Ն. Տաղավարյանը, Վանից՝ Վ. Փափազյանը:[3]

---

[1] Վահան Փափազյան, Իմ հուշերը, հ.երկրորդ, Պեյրութ, 1952, էջ 90:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 90:
[3] Նույն տեղում, էջ 91-92:

Պետք է շեշտել, որ մահմեդական պատգամավորների մեջ մեծ թիվ էին կազմում հետադիմական կրոնավոր տարրերը (35 տոկոս), որոնց շնորհիվ էր, ինչպես հաստատում է նույն Կոմսը, «մարտի 31 հետաշրջական շարժումը ծայր տվավ: Իթթիհատը իր գլխուն մեծ փորձանք բերավ հետադեմ տարրերը սիրաշահելու հիմար քաղաքականությամբ...»:[4]

Հայ պատգամավորների մեջ դաշնակցականներ էին չորսը՝ Արմեն Գարոն, Վարդգեսը, Գեղամ Տեր-Կարապետյանը և Վ. Փափազյանը: Ինչպես տեսնում ենք, հայ երեսփոխանների մեջ դաշնակցականները մեծամասնություն չէին կազմում և այստեղից էլ՝ սխալ է օսմանյան խորհրդարանում ոչ արդյունավետ գործունեության մեղքը գցել միայն նրանց վրա:

«Միություն ու առաջադիմություն» կուսակցությունը խորհրդարանում ուներ 160 պատգամավոր, Ահրարների կուսակցությունը՝ 20-25, հնչակյանները՝ 1, բուլղար կլուբիստները՝ 2, սոցիալ-դեմոկրատները՝ 1, անկուսակցականները՝ 70:[5]

Սակայն, մարտի 31-ի հեղաշրջման փորձից հետո այս պատկերը փոխվեց: Երիտթուրքերի ձայների թիվը նվազեց և հասավ 125-130-ի, մնացին դաշնակցականների 4 ձայնը, հնչակյանների 1 ձայնը, սոց-դեմոկրատների 1 ձայնը և բուլղար կլուբիստների 2 ձայնը:[6]

«Իսկ մնացյալ ահագին զանգվածը,-ինչպես գրում է Կոմսը, - անկուսակցական հայտարարեց ինք զինքը, որոնցմե մեծ մասը «Ընմիյեթը Իլմիյէին» (գիտուններու ընկերություն) կը պատկաներ, այսինքն 80 մոլլաներ, որոնք Շերիաթի օրենքներու վրա կուզեին հիմնել պետությունը»:[7]

Հ.3. Դաշնակցության բարձրագույն մարմինը (ՀՅԴ-ի ներկայացուցիչների խորհուրդ), կուսակցական պատգամավորների մասնակցությամբ, մշակել էր գործունեության ծրագիր (պլատֆորմ), որի իրականացումը պահանջում էր կառավարությունից և որի հիմնական կետերն առնված էին ՀՅԴ ծրագրից: Դրանք էին.

1) «Օսմանյան կայսրությունը, քանի կունենա սահմանադրական ժողովրդավար կարգեր, պիտի ճանչցվի անկախ և ամբողջական:

2) Թուրքաց հայաստանը կը կազմե կայսրության անբաժան մասը և կը վարե իր տեղական գործերը, հիմնված ապակենդրոնացման սիստեմի վրա, ուրմե հավասար կերպով պիտի օգտվին երկրի մեջ ապրող բոլոր ազգերը:

3) Օսմանյան կեդրոնական կառավարությունը, հիմնված ժողովրդական ներկայացուցչության սիստեմի վրա, կը վարե պետության ընդհանուր

---

[4] Նույն տեղում, էջ 91:

[5] Նույն տեղում, էջ 93:

[6] Նույն տեղում, էջ 94:

[7] Նույն տեղում:

գործերը.- արտաքին քաղաքականություն, զորք, դրամ, մաքս, երկաթուղի, պոստ-հեռագիր և այլն, տեղական մյուս ֆունկսիոները թողնելով շրջաններուն:

4) Պառլամենտական դատաստանական և տեղային վարչական բոլոր մարմինները պիտի ընտրվին ընդհանուր, հավասար, գաղտնի և համեմատական ձայնատվության սկզբունքով: Այս սկզբունքը կը գործադրվի բոլոր ազգերու և կրոններու համար հավասարապես»:[8] (Ընդգծումը մերն է-Ա.Ն.)

Ընդգծվածից պարզ է, որ Արևմտյան Հայաստանը լինելու էր կայսրության անբաժանելի մասը: Սա նշանակում է, որ կուսակցության խորհրդարանական գործունեությունը պետք է սահմանափակվեր այնպիսի պահանջներով, որոնք վերաբերվում էին կայսրության բոլոր քաղաքացիների իրավահավասարությանը: Չէր դրվում որևէ անջատողական խնդիր, այլ բոլոր ազգերի համերաշխության:

Հայ պատգամավորները մշակում են նաև տուրքերի թեթևացմանը, բանվորական իրավունքների պաշտպանությանը, գյուղերին վարկեր իրականացնելու համար բանկերի ստեղծմանը, երկրագործության զարգացմանը նվիրված օրինագծեր, բայց դրանք մնում են թղթի վրա:

Ապարդյուն են անցնում նաև մասնավորապես դաշնակցական պատգամավորների փորձերը ստեղծել Փոքր Ասիայի (Անատոլիա) պատգամավորների մի միություն՝ ընկերային, տնտեսական և վարչական գործերը կանոնավորելու համար: Մահմեդական պատգամավորները խուսափում էին համագործակցելու հայերի հետ: Քրիստոնյաները նույնպես դրան չէին գնում, գտնելով, թե վտանգավոր հետևանք կարող է ունենալ քրիստոնյաների առանձնացումը:

Այսպիսով, ինչպես համոզվում ենք, ՀՅԴ խորհրդարանական գործունեությունը դատապարտված էր ավլության: Իսկ թե ինչու էր այդպես, ինքնատիպ է բացատրում Ռուբենը: Նա հետևյալն է գրում. «Իրականության մեջ դարձած էինք երիտասարդ թուրքերու քաղաքականության ամենեն հավատարիմ կողմնակիցները: Հակառակ այդ իրողության՝ մենք տեսականորեն ընդդիմադիր դիրքի մեջ կը գտնվեինք թե՛ Սահմանադրության և թե՛ իթթիհատին հանդեպ, քանի որ մեր տեսությամբ «Ատեմի Մերքեզիեթը»-վարչական և քաղաքական ապակենտրոնացումը-կը մնար մեր հիմնական պահանջը: Իրական կյանքի մեջ մենք ծուլված էինք իթթիհատի հետ, բայց գաղափարական գետնի վրա կը մնայինք նրա հակառակորդը: Մյուս կողմեն մենք իրական կյանքի մեջ հակառակ էինք «Ահրար» կուսակցության կամ այլազգերու, մակեդոնացի և արաբ ժողովուրդներու ձգտումներուն, երբ անոնք կուզեին ապակենտրոնացում և նույնիսկ անջատում, բայց գաղափարապես նրանց հետ էինք:

---

[8] Նյութեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար, Ա հատոր, Պեյրութ, 1984, էջ 178:

Դա հակասություն էր, և բացահայտ հակասություն: Մեր հոգին և մարմինը բաժանված էին: Եվ այդ իրողությունը պատճառ կը դառնար որ թե' իթթիհատը և թե' Ահրարը մեզ հանդեպ վերապահ դիրք բռնեն: Ու մենք կը զրկվեինք «թե ժամից և թե ջամիից»:[9]

Այսպիսով, ստացվում է, որ իրոք ՀՅԴ-երիտթուրք դաշինքը կամ համագործակցությունը ի սկզբանե դատապարտված էր խզման:

Ադանայի եղեռնից հետո Դաշնակցության խորհրդարանական խմբավորումը գրեթե ոչնչի չի կարողանում հասնել հանցավորներին գտնելու և պատժելու առումով: Խախտվում է նրա վստահությունն՝ իթթիհատի հանդեպ: Ադանայի եղեռնից հետո Դաշնակցությունը հանդես է գալիս հետևյալ պահանջներով.

1. «- Օրինակելի պատիժ թերացող պաշտոնյաներուն և կոտորածի և թալանողներու ղեկավարներուն, իսկ զանգվածը հավաքական պատասխանատվության ենթարկել:

2. – Հատուցանել կամ վերադարձնել հայերու կրած նյութական վնասները:

3. - Այրիներուն կամ ազգականներուն ապահովել համապատասխան թոշակ:

4. – Քանի մը տարի ազատել ժողովուրդը սովորական տուրքերե:

5. - Անտեր մնացած հողերը և կալվածները նկատել սեփականությունը եկեղեցիին և դպրոցին:

6. – Վերակազմել ժանտարմրին և ստեղծել ապահովության ուժեր՝ մասնակցությամբ բոլոր ազգություններու, հայ գյուղերու մեջ պետական զենքերով զինված հայ պահակախմբերու կազմություն:

Դաշնակցությունը այս հիմերու վրա չի հրաժարիր գործակցիլ իթթիհատի հետ»:[10] (Ընդգծումը մերն է-Ա.Ն.)

Այս պահանջները բխում էին ՀՅԴ Ընդհանուր ժողովի որոշումներից: Եվ ահա, 1909թ. օգոստոսյան մի օր իթթիհատի Կ. Պոլսի կենտրոնից պատվիրակներ են գալիս ՀՅԴ բյուրո և խնդրում ներկայացուցիչներ ուղարկել Սելանիկ (Սալոնիկ)՝ «բարեկամական հանդիպումի մը համար»:

Բյուրոն ընդունում է հրավերը և որպես պատվիրակ ուղարկում է Հ. Շահրիկյանին և Արմեն Գարոյին: Սելանիկ են հասնում նաև Վասպուրականի դաշնակցական ընկերներ Սարգիսը (էրզրումից) և Պ. Մելոյանը (Իզմիրից):

ՀՅԴ-իթթիհատ բանակցությունները տևում են շատ կարճ և արդյունք չեն տալիս: ՀՅԴ պահանջների էական մասը չի ընդունվում:

---

[9] Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը հիշատակները, h. Զ (6),Լոս-Անճելըս, 1951, էջ 42, նաև՝ Աշոտ Ներսիսյան, Ռուբեն,Երևան, 2002, էջ 125:
[10] Վ. Փափազյան, Նշվ. աշխ., էջ 126:

Բանակցությունները շարունակվում են Կ. Պոլսի մեջ, որին մասնակցում են՝ ՀՅԴ կողմից Կոմսը և Արմեն Գարոն, իսկ իթթիհատի կողմից՝ ՄԻտիհատ Շյուքրին և դոկտ. Նազըմը: Ի վերջո երկու կուսակցությունների միջև կնքվում է հետևյալ համաձայնագիրը.

«1. - Անշեղ գործադրություն ժողովրդավար սահմանադրական օրենքներու:

2. - Միացյալ ուժերով պայքար հակասահմանադրական հետադեմ տարրերու դեմ:

3.- Ապակեդրոնացյալ հիմքերով վերակազմել վարչական հիմնարկությունները:

4. - Հավասարություն և անխտրականություն փոքրամասնություններու իրավանց»:[11]

Այս համաձայնագիրն ուներ նաև մեկ հավելված, այն է՝ «Վերոհիշյալ որոշումներու իրագործումին հսկելու նպատակով երկու կուսակցություններու կողմե լիազորված հատուկ մարմնի մը կազմությունը ընդունված է»:[12]

Այս համաձայնագիրը միառժամանակ հարթեցնում է ՀՅԴ և երիտթուրք լարված հարաբերությունները: Դժվար է պնդել, ճիշտ էր արդյոք նորից համագործակցելը իթթիհատի հետ, թե անհրաժեշտ էր կտրուկ կերպով խզել կապերը: Կարծում ենք, որ համագործակցության եզրեր որոնելը տակավին ճիշտ էր, բայց անհրաժեշտ էր գաղտնորեն ամրապնդել միաժամանակ ՀՅԴ մարտական կորիզը, որը և չարվեց:

Դաշնակցությանը մեղադրում են այս համագործակցության համար, բայց, ինչպես վկայում է նույն Կոմսը, այն ժամանակ հետևյալ կարծիքն էր ոչ միայն ՀՅԴ մեջ իշխում. «Անխոհեմություն է թշնամացնել Իթթիհատը, մեր ճակատագիրը անոնց ձեռքն է այսօր Ատանա, վաղը կրնան նույնը կրկնել ուրիշ տեղեր, քանի որ երկրին ղեկը և ուժը անոնց ձեռքն է, պետք է շահիլ զիրենք՝ բարեկամ ձևանալով»:[13]

Սա նշանակում է, որ խզումը իթթիհատի հետ դեռևս համարվում էր վտանգավոր: Դաշնակցության դրության բարդությունը կայանում էր նրանում, որ չկար այն անհրաժեշտ կուսակցությունը, որի հետ կարելի էր համագործակցել: Այն ժամանակ, գրեթե բոլորի, նաև ոչ դաշնակցականների մեջ արմատացած էր Զոհրապի հետևյալ համոզմունքը. «Իսլամ տարրը դյուրությամբ չի կրնար հրաժարիլ դարերու ընթացքին կազմված համոզումե մը, որ զինքը բացարձակ տերը կը հռչակե այս երկրին: Աշխատություն և տարիներ պետք են փոխելու անոնց հոգեբանությունը... Անոնք, որ ազատական են, մեզի պես ազատականներ են և այդ կուսակցության-իթթիհատի-կը պատկանին: Մեր համոզմունքը, մեր զգացումները կը պատվիրեն մեզի, որ

---

[11] Նույն տեղում, էջ 128:
[12] Նույն տեղում, էջ 129:
[13] Նույն տեղում:

աջակցինք անոնց ծեռնարկած դժվարին գործին...: Ոչ ոք ինծի չափ խստությամբ ու երբեմն անգթորեն մատնանիշ ըրած է այդ կուսակցության թերությունները, բայց այդ պատճառ մը չէ, որ չճանչնանք անոր ազատական հիմերը...: Եվ ու՞ր է ավելի ազատական կուսակցություն մը, որուն աջակցիլ նախամեծար պիտի ըլլար: Չափավոր ազատական «Սիրար» և ժողովրդական ըսված «Իթիլաֆ» կուսակցությունները իրենց կազմությամբ հետադիմական և կրոնամոլական մարմիններ են...: Ասկե զատ՝ մի մոռնաք, որ այս իթթիհատ և Թերագգը կուսակցությունը կառավարական կուսակցություն է, եթե մեր զգացումները և համոզումները նույնիսկ այն կողմ չեն մղեր մեզ, մեր ազգին մասնավոր շահերը անոնց հետ համերաշխ գտնվելու պիտի պարտավորեն զմեզ: Քաղաքականության մեջ միմիայն զգացումով չի քայլվիր...»:[14]

Զոհրապի խոսքերից այս մեջբերումը հետևյալ եզրակացությունների տեղիք է տալիս.

Առաջին. Թուրքը իրեն համարում էր երկրի բացարձակ տերը, ինչը նշանակում էր, որ նա չէր հանդուրժելու այլազգիների ոչ թե անջատողական, այլ թեկուզ և մշակույթային ինքնավարության ձգտումները:

Երկրորդ. Իթթիհատը համարվում էր ամենաազատական կուսակցությունը, բայց եթե իսկապես նրանից ավելի ազատականը չկար, ապա՝ դա նշանակում էր անպայմանորեն անհրաժեշտ էր դաշինքը նրա հետ:

Երրորդ. Եթե իթթիհատի կառավարող կուսակցություն լինելու հանգամանքը պետք է ստիպեր համերաշխ լինելու նրա հետ, ապա՝ այդ համերաշխությունը պետք է լիներ փոխադարձ: Բայց, դրա փոխադարձությունը կասկածելի էր:

Խորհրդարանի հայ պատգամավորների համար ցավալի էր նաև Օսմանյան պետության ոչ իսլամ տարրերի այդ թվում՝ հայերի զինվորագրության հարցը: Հայերը չէին կարող հաշտվել այն մտքի հետ, «որ իրենց զավակները թյուրք բանակին մեջ մտնեին, ապրեին աղտոտ և քրիստոնատյաց Անատոլուի թյուրքերուն հետ կողք կողքի, ուտեին միևնույն ամանեն և պառկեին անոնց հետ: Եվ ատոր համար,-շարունակում է Կոմսը,-կը նախընտրեին ծախծխել իրենց ոչխար տավարը, արմտիքը, նույնիսկ իրենց հողերը՝ վճարելու համար «պետելը» (50 ոսկի) և փրկվելու այդ անհանդուրժելի ծառայութենեն: Ունևոր թե չքավոր դասը, ազգի դավաճան կը համարեին հայ երեսփոխանները, մանավանդ Զոհրապը և Վարդգեսը, որոնք բեմեն հայերու զինվորագրության ի նպաստ խոսեցան, իսկ մեր կուսակցական հակառակորդները լուտանք չմնաց, որ չթափեին «ազգադավ» մեր կուսակցության գլխուն»:[15]

---

[14] Նույն տեղում, էջ 129-130:
[15] Նույն տեղում, էջ 130:

Այդ մեջբերումը կարևոր հետևությունների տեղիք է տալիս: Դրանք են 1) Եթե իսկապես Հ.Յ. Դաշնակցությունը ուզում էր լծվել Օսմանյան հայրենիքի վերաշինության գործին, ապա՝ անպայմանորեն պետք է կողմ լիներ, որ զինվորագրվեին բոլոր օսմանյան քաղաքացիները, այդ թվում և հայերը և այս առումով ճիշտ էին Զոհրապը և Վարդգեսը և սխալ՝ ՀՅԴ գլխին լուտանք թափողները, 2) Արևմտահայ ժողովուրդը, որը Սահմանադրությունից հետո գրեթե չէր զինվում, քանզի փոխվել էր ՀՅԴ մարտավարությունը, սրանով զենք կրելու հնարավորություն էր ստանում: Իսկ Թուրքիայի այդ օրերի հակասական ներքաղաքական իրավիճակը անպայմանորեն թելադրում էր զենք ունենալու անհրաժեշտությունը: Իսկ հայ ժողովուրդը, դժբախտաբար, դա չէր գիտակցում: Թուրքական բանակի հայ զինվորները միջազգային պատեհ առիթի դեպքում կարող էին ապստամբել:

Ելնելով այս ամենից՝ մասնավորապես Վարդգեսը, Զոհրապը և Կոմսը պնդում էին, որ հայ զինվորներն իրենց ծառայությունն անցկացնեն իրենց երկրում, կամ դրան մոտիկ վայրերում: Կառավարության ղեկավար Շեվքեթ փաշան սկզբունքով ընդունում է այս առաջարկը, բայց պայմանով, որ օրենքը տարածվի օսմանյան բոլոր ժողովուրդների վրա:

Այնուամենայնիվ, օրենքն առաջին նստաշրջանի վերջին օրերին անցնում է: Սակայն, հայերը հետագայում էլ խուսափում էին զինվորական ծառայությունից:

Եթե ընդհանրացնենք, ՀՅԴ խորհրդարանական գործունեությանը պետք է տանք հետևյալ գնահատականը: Այն արդյունավետ չէր և չէր կարող լինել հետևյալ պատճառներով.

Առաջին. Խորհրդարանում չկար գործողությունների միասնություն, իրար չէին վստահում քրիստոնյա և իսլամ տարրերը:

Երկրորդ. ՀՅԴ կուսակցությունը թեև իրեն դրսևորում էր անկեղծորեն և հավատարիմ Սահմանադրության կարգախոսներին, բայց երիտթուրքերը երկդիմի էին և դեմ էին հայության առաջընթացին:

Երրորդ. Թուրքիան դեռևս պատրաստ չէր ժողովրդացման համար և խորհրդարանում իշխող կուսակցության կողմից անընդունելի էր ոչ միայն անջատողական (որը չկար), այլ նույնիսկ մշակույթային ինքնավարության որևէ ձգտում, որն, ի վերջո, կարող էր հանգեցնել անջատողականության:

Հայությունը Սահմանադրությունից հետո ապրում էր մշակույթային զարթոնք, որն անհանդուրժելի համարեցին երիտթուրքերը, որոնք որդեգրելով հակահայ քաղաքականություն՝ ստիպեցին Դաշնակցությանը՝ խզել հարաբերությունը նրա հետ: Բայց ՀՅԴ արդեն բավական ժամանակ էր կորցրել և նորից պետք է սկսեր այն, ինչն ավարտել էր Սահմանադրությամբ, այն է՝ արևմտահայության զինումը և նախապատրաստումը: